Արձանագրություն N 3

Ապրիլի 7-ի կապակցությամբ Կենտրոն վարչական շրջանի անապահով ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու նպատակով հագուստի և կենցաղային ապրանքների ձեռքբերման «ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

22.03.2019թ.

Ժամը՝ 10:35

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մինասյան /գնահատող/, Մ. Մալխասյան /գնահատող/
Ե. Մաթևոսյան /բացող/, Մ. Սարգսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Անհամապատասխանության շտկման մասին

(Ս. Ներսիսյան)

Ընդունել ի գիտություն, որ «Լույս Տորգ» ՍՊԸ-ի, «Քլիմ Ֆոամ» ՍՊԸ-ի և «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտերում առկա անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ս. Ներսիսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել.

-1-2-րդ չափաբաժինների մասով «Լույս Տորգ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

-3-րդ չափաբաժնի մասով «Քլիմ Ֆոամ» ՍՊԸ, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ստացման հաջորդ աշխատանքային օրը, բայց ոչ

ուշ քան 28.03.2019թ. ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ս. Ներսիսյան

Անդամներ՝ ---------- Ե. Մաթևոսյան

---------- Մ. Սարգսյան

---------- Վ. Մինասյան

---------- Մ. Մալխասյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան